ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/07

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Մեգիէլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Տ. Ջիլավյանի և Հ. Ավշարյանի,
«Մեգիէլ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Փարիզյանի, ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 11.02.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 11.02.2021թ.-ին:

15.02.2021թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/07 համարի ծածկագիրը:

19.02.2021թ.-ին, 25.02.2021թ.-ին, 02.03.2021թ.-ին և 05.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.03.2021թ.-ին:

2. «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 11.02.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1 «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ նաև Ընկերություն):

1.2 Ընկերությունն Ընթացակարգին մասնակցել է 3-րդ չափաբաժնով՝ օքսիգենատոր մեծահասակի համար: Ընթացակարգին մասնակցել է համարժեք ապրանքատեսակով՝ համաձայն հրավերի:

1.3 Ընթացակարգի վերաբերյալ Ընկերությունը 28.12.2020 թվականին ներկայացրել էր բողոք և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 29.01.2021թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշմամբ բողոքը բավարարվել էր մասնակի:

1.4 29.01.2021թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշումն ուժի մեջ մտնելուց հետո նիստ է հրավիրել 08.02.2021թ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.02.2021թ ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրության 2-րդ կետով որոշել է՝

- «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ի հայտում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերի պահանջներին,

- «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերը առկա են, սակայն ներկայացված 1.1 հավելվածով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին: Չեն համապատասխանում առաջաբկի հետևյալ ցուցանիշները.

- օքսիգենատորի տարողունակության ծավալը 219մլ,

- շփվող մասի արտաքին շերտը՝ 1,75մ2,

- մաքսիմալ արյան հոսքը՝ 8,0 լիտր/րոպե,

-արտերիալ ֆիլտրի նվազագույն զտումը՝ 41 սm + 38 սm

- ջերմափոխանակիչի նյութը՝ պոլիուրետան (հիմք ընդունելով Մասնակցի կողմից Պատվիրատուին 21.12.2020թ. ներկայացրած գրությունը):

Նույն արձանագրության 3-րդ կետով հանձնաժողովը որոշել է՝ օրենքով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, հաջորդ նիստ հրավիրել 09.02.2021թ, ժամը 16:20 և տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /09.02.2021թ., ժամը 16:20/ շտկել անհամապատասխանությունները:

1.5 Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.02.2021թ ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրությունը Ընկերության megiel.tender@inail.ru. էլեկտրոնային հասցեին ուղարկվել է 08.02.2021թ ժամը 15:18-ին:

1.6 Թիվ 7 արձանագրության 3-րդ կետով սահմանված ժամկետում Ընկերությունը ներկայացրել է շտկում և պարզաբանում:

1.7 Գնահատող հանձնաժողովը 09.02.2021թ թիվ 8 արձանագրության 1-ին մասով որոշել է ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը ներկայացրել է գրություն և հավելված 1.1, սակայն տեխնիկական ցուցանիշների արձանագրված անհամապատասխանությունների մասով բնութագրի շտկում չի իրականացվել: Հանձնաժողովը որոշեց Ընկերության հայտը 3-րդ չափաբաժնով գնահատել անբավարար և մերժել հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

8-րդ արձանագրության 2-րդ կետով հանձնաժողովը որոշել է՝ գնային առաջարկի նվազեցման նպատակով «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ին հրավիրել բանակցությունների, որի նիստը տեղի կունենա 12.02.2021թ ժամը 11:00-ին ք. Երևան, Ա. Արմենակյան 108/4 հասցեում, գնումների բաժնում, բանակցությունների կարգը և վերջնաժամկետը կսահմանվի նիստին:

2. Բողոքի փաստական և իրավական հիմքերը.

2.1 Ընթացակարգի առնչությամբ 28.12.2020 թվականին ներկայացրած բողոքով որպես պահանջ էր ներկայացվել.

1. ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել դադարեցնել թիվ 5 արձանագրության 1-ին կետի՝ հիմք ընդունելով «Մեգիէլ» ՍՊ ընկերության ներկայացրած տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև բժշկական կենտրոնի համապատասխան ծառայության մասնագիտական եզրակացությունները, հանձնաժողովը որոշեց մերժել «Մեգիէլ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտը հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով, 24.12.2020թ որոշումը,

2. ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել դադարեցնել թիվ 5 արձանագրության 2-րդ կետի՝ հաշվի առնելով, որ գնումը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ, ուստի հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և բավարար գնահատված բոլոր մասնակիցներին օրենքով սահմանված կարգով հրավիրել բանակցությունների գնային առաջարկների նվազեցման շուրջ, որը տեղի կունենա 29.12.2020թ ժամը 14:00-ին, 24.12.2020թ որոշումը:

3. ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել «Մեգիէլ» ՍՊ ընկերության հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

Բողոքի քննության արդյունքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 29.01.2021թ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշմամբ բավարարել է 1-ին և 2-րդ կետերի պահանջը:

Բողոքը վարույթ ընդունելով այլևս կասեցվում է վիճարկվող ընթացակարգը և պատվիրաաուի գնահատող հանձնաժողովը պարտավոր է առաջնորդվել այդ օրենքի պահանջով և իրավունք չունի որևէ գործողություն անել:

Ընթացակարգով գնահատող հանձնաժողովը 29.12.2020 թվականին հրավիրված նիստով իրականացնում է բանակցություններ, որից հետո՝ կնքում պայմանագրեր:

Ի դեպ 29.01.2021թ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշմամբ 24.12.2020թ թիվ 5 արձանագրության 2-րդ կետը դադարեցվել է ամբողջությամբ և ոչ թե միայն 3-րդ չափաբաժնի մասով:

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնակուսն կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հապարակայիև և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ներկայացված նորմերի վերլուծությունից փաստում ենք, որ գնումների օրենսդրությունը հիմնվում է գնման գործընթացի մրցակցային, թփանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, ապահովելով գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:

Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրաուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով Ընկերությունը մասնակցել է համարժեք ապրանքով:

Արդյոք 3-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքը չէր կարող ներկայացվել այնպես, որ հղում չարվեր ֆիրմային անվանմանը, մոդելին, որպեսզի հետագայում տարակերպ մեկնաբանության տեղիք չտար: Եթե հղում չարվեր ֆիրմային անվանմանը, մոդելին և չնշվեր կամ համարժեք եզրույթը, միգուցե Ընկերությունը համարժեք ապրանքով հայտ չէր ներկայացնի:

Այս պարագայում հարց է առաջանում գնահատող հանձնաժողովը մերժելով Ընկերության հայտը 3-րդ չափաբաժնով, արդյոք ապրանքի համարժեքությունը գնահատել է նպատակին ծառայելու կամ որոկական հատկանիշներից ելնելով, թե զուտ համեմատություն է անցկացրել ինչ-որ թվային չափորոշիչների, որն ապահովում է բացառապես Horizon AF Plus ապրանքատեսակը:

Պատվիրատուն տեխնիկական բնութագրով առանց անհրաժեշտության նշել է ֆիրմային անվանում և այդ անվանումով առաջնորդվելով է գնահատում այլ ապրանքների համարժեքությունը: Նման պարագայում համարժեք ապրանաքտեսակով հայտ ներկայացնելն իմաստազրկվում է, քանի որ, պատվիրատուն ուղեցույց է դիտարկելու բացառապես այդ ֆիրմայի արտադրանքը և ոչ թե այնպիսի չափորոշիչներով ապրանք, որոնք համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, չառաջացնելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

Ուշագրավ փաստ է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.02.2021թ ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրությունը Ընկերության megiel.tender@mail.ru էլեկտրոնային հասցեին ուղարկվել է 08.02.2021թ ժամը 15:18-ին:

Ըստ էության գնահատող հանձնաժողով չի եղել, նիստ տեղի չի ունեցել, այլ Պատվիրատուի ինչ-որ աշխատակից շատ ավելի վաղ կազմել է «արձանագրություն իր անհիմն որոշումներով» և ուղարկել Ընկերությանը:

Բացի այդ Պատվիրատուն 29.01.2021թ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշումից հետո պետք է նոր հանձնաժողով ձևավորեր, քանի որ բողոքի քննության ընթացքում Պատւիրատուի ներկայացուցիչը հայտարարեց, որ հանձնաժողովը չի ունեցել բավարար մասնագիտական հմտություններ, իսկ 08.02.2021թ թիվ 7 արձանագրությունից պարզ է դառնում, որ հանձնաժողովի անդամները նույնն են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշման (հետայսու՝ նաև Կարգ) 26-րդ կետի համաձայն 1-ին ենթակետի համաձայն՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով սույն կարգի 25-րդ կետով նախատեսված գրավոր հանձնարարականը կամ գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը, որը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Գնահատող հանձնաժողովի՝

1) կազմը բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, որոնք սահմանվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության դեպքում նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն:

Նույն կետի 2-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝ գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ.

նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Ելնելով վերը ներկայացված իրավական կարգավորումների լույսի ներքո փաստերի վերլուծությունից, արձանագրում ենք, որ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պատշաճ չի ձևավորվել և 08.02.2021 թվականի 16:00-ին նիստ տեղի չի ունեցել:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

3. <u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 15.02.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/2093-2021 գրությամբ դիմել է «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 11.02.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին, 18.02.2021թ.-ին թիվ 08-102 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան <<Մեգիէլ>> ՍՊԸ-ի (Այսունետև՝ Մասնակից) կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 10.02.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/07 ծածկագրով բողոքի, հայտնում ենք հետևյալը.

1. Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշման պահանջները կատարելու մասով.

Մասնակիցը Ընթացակարգին մասնակցել է միայն 3-րդ չափաբաժնով: Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 բողոքի շրջանակներում բողոքարկել էր Ընկերության հայտի մերժման հանձնաժողովի կայացրած որոշումը և դրանից բխող գործողությունները միայն այդ չափաբաժնի մասով: Տվյալ բողոքի շրջանակներում քննարկում իրականացվել է միայն 3-րդ չափաբաժնի մասով: Հետևաբար, տվյալ բողոքի մասով բողոքը քննող անձի կայացրած որոշումը վերաբերվում է միայն 3-րդ չափաբաժնին:

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) 51-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների

<<Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:>>

Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 բողոքի մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 29.12.2020թ-ին ժամը 16:45-ին /կցվում է/, սակայն բանակցությունների վարման և հաղթողի ընտրության վերաբերյալ հանձնաժողովի թիվ 6 նիստը կայացել է նույն օրը ժամը 14:00-ին: Դրանից հետո պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում՝ առանց 3-րդ չափաբաժնով հաղթողի ընտրության նշման և այդ մասով ընթացակարգը կասեցվել է՝ սկսած այդ հրապարակումից:

Այնուհետև բողոքը քննող անձի կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշմամբ բողոքը բավարարվել է մասնակի, Մասնակցի հայտի մերժման և բնականաբար այդ չափաբաժնով միայն բանակցությունները առանց Մասնակցի անցկացման մասով: Ընդ որում որոշման կայացման հիմքում՝ << 4. Բողոքը քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը>> մասում, հստակ արտահայտված է այն, որ հանձնաժողովը չի ունեցել հայտի գնահատման մասնագիտական կարողություն 3 հոգանոց կազմով՝ Ն. Նելիքյանի նախագահությամբ, և հանձնաժողովի իրականացրած գործողությունները հայտի գնահատման մասով եղել են ոչ իրավաչափ մինչև Ա. Օհանջանյանի հանձնաժողովի կազմ ներառվելը: Միաժամանակ հանձնաժողովը պետք է դեռ իրականացնի Ա. Օհանջանյանի նախագահությամբ կազմով հայտի նոր գնահատում: Ի կատարումն այդ պահանջների

Հանձնաժողովն իրականացրել է նոր նիստ, չեղարկել մինչ այդ 3-րդ չափաբաժնով հայտի մերժման և դրանից բխող բոլոր կատարված գործառույթները և իրականացրել հայտի գնահատում Ա. Օհանջանյանի նախագահությամբ 4 հոգանոց կազմով՝ ինչպես և պահանջված էր որոշմամբ:

Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարի 06.12.2018թ. 600-Ն հրամանի գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 28-րդ կետի, թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշման կատարման մասին տեղեկատվությունը Պատվիրատուն բողոքը քննող անձին ուղարկել է 08.02.2021թ., որը վերջինիս կողմից հրապարակվել է կայքում 09.02.2021թ., ինչը փաստում է, որ Պատվիրատուն հստակ կատարել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշման պահանջը /կցվում է/:

2. Գնահատող հանձնաժողովի թիվ 8 նիստի պատճենը Մասնակցին ուղարկելու ժամի վերաբերյալ.

Ընկերության կցած էլեկտրոնային քաղվածքում արտահայտված է հետևյալը.

<< Дата: Понедельник, 8 февраля 2021, 15:18 +03:00 >>

Այստեղից հստակ երևում է այն, որ Մասնակցի համակարգչում սխալ է ներմուծված ժամային գոտին (+03:00): Հայաստանում գործում է +04:00 ժամային գոտին: Այդ իսկ պատճառով Պատվիրատուի էլեկտրոնային փոստից 16:18 ուղարկված նամակը Ընկերության էլեկտրոնային փոստին երևում է 15:18:

Ընկերությունը նախապես ծանուցված է եղել նիստի օրվա, վայրի և ժամի մասին, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին: Հաշվի առնելով նիստին չներկայանալը, ինչպես նաև նման տեխնիկական խնդիրների առկայությունը, Մասնակիցը թույլ է տվել իրեն կատարել այնպիսի զրպարտիչ և անհիմն հայտարարություն, թե իբր նիստ չի եղել և Պատվիրատուի ինչ-որ աշխատակից զբաղված է ինքնագործունեությամբ, Մասնակցի նման վարքագիծն առնվազն անհասկանալի է:

08.02.2021թ. հանձնաժողովի թիվ 7 նիստը մեկնարկել է 16:00-ին և նիստի ավարտից հետո կազմված և ստորագրված արձանագրության պատճենը 16:18 ուղարկվել Մասնակցին: (նիստի մասին ծանուցման և նիստի արձանագրության էլ. փոստի քաղվածքները կցվում են):

3. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) 13-րդ հոդվածի

1-ին կետի համաձայն << Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ

մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:>>,

2-րդ կետի համաձայն

<<Գնման առարկայի բնութագրերը

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը: >>

5-րդ կետի համաձայն.

<< Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը>>

Նշված հոդվածով հստակ սահմանված է այն, որ <<կամ համարժեք>> բառակապակցությունը կիրառելի է որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումներին, այլ ոչ թե քանակական, ծավալային, կամ այլ տեխնիկական բնութագրիչ պարամետրերին: Մասնակիցը իրավունք չունի Պատվիրատուից պահանջել հրավերով նախատեսված տեխնիկական ցուցանիշներից տարբերվող այլ ցուցանիշներով ապրանքը գնահատել և ընդունել որպես համարժեք: Գնման առարկայի տեխնիկական բնութագրերը սահմանում է Պատվիրատուն, առաջարկերի համարժեքությունը նույնպես գնահատում է Պատվիրատուն, գնումը նույնպես կատարում է Պատվիրատուն՝ իր կարիքին համապատասխան:

Մասնակիցների հայտերը գնահատվում են հրավերի պահանջներին համապատասխան և եթե առկա են անհամապատասխանություններ հրավերով

նախատեսվածի համեմատ, ապա Օրենքի պահանջների համաձայն Մասնակցի հայտը ենթակա է մերժման:

4. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն

<<1. Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:>>

Գնման ընթացակարգի շրջանակներում 3-րդ չափաբաժնով առկա է ընտրված մասնակից և նման իրավիճակում այն չկայացած հատարարելու հիմքեր առկա չեն:»:

Պատվիրատուն 24.02.2021թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան <<Մեգիէլ>> ՍՊԸ-ի (Այսունետև՝ Մասնակից) կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 10.02.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/07 ծածկագրով բողոքի շրջանակում ներկայացված միջնորդության, հայտնում ենք հետևյալը.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածով սահմանված է հետևյալը. <<Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:>>:

<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 5-րդ ենթակետը սահմանում է.

<<նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է>>:

Գնահատող հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը

պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Դահլիճը, որտեղ կայանում են նիստերը, տեսաձայնագրվում է, սակայն կրիչի վրա ձայնագրությունները պահպանվում են 1 /մեկ/ շաբաթ/, ուստի Պատվիրատուն այդ ձայնագրությունները չի կարող տրամադրել:

Ամփոփելով վերոգրյալը, արձանագրում ենք, որ գնման ընթացակարգի անբաժանելի մաս է հանդիսանում միայն նիստի արձանագրությունը, տեսաձայնագրությունների կամ ձայնագրությունների պահպանման ժամկետ, արխիվացման որևէ ընթացակարգ կարգով նախատեսված չէ, ուստի Պատվիրատուն դրանց պահպանման և արխիվացման մասով որևէ գործառույթ չի իրականացրել, հետևաբար գնման ընթացակարգը կազմակերպել և իրականացրել է օրենքի պահանջներին համապատասխան:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 26.11.2020թ.-ին հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 11.12.2020թ.-ին ժամը 12:00-ը ներառյալ:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

iv. «Մեգիէլ» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից ներկայացնելով Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն թիվ 1.1 հավելվածի:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.12.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից 3-րդ

չափաբաժնի համար ներկայացվել է համարժեք ապրանք, ինչով պայմանավորված, հանձնաժողովը, որոշել է նիստը կասեցնել և դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

vi. Հանձնաժողովի 17.12.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ կենտրոնի համապատասխան ծառայության կողմից ստացվել է մասնագիտական եզրակացություն, ըստ որի «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնով ներկայացված Sorin Inspire 8F մեծահասակի օքսիգենատորի մի շարք ցուցանիշներ չեն համապատասխանել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և տեղեկացնել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 21.12.2020թ.-ին ժամը 12:00-ն շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

viii. Հանձնաժողովի՝ նախագահությամբ Ն. Մելիքյանի, 21.12.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրել է իր կողմից ներկայացրած տեխնիկական առաջարկի պարզաբանում, միաժամանակ առաջարկելով նաև այլ մոդելի ապրանքներ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է կրկին դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

ix. Պատվիրատուի ղեկավարի՝ տնօրեն Մ. Ադամյանի, կողմից 22.12.2020թ.-ին կազմված թիվ 1156/1 հրամանով «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմում կատարվում է փոփոխություն, որի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահ է ընդգրկվում պատասխանատու պերֆուզիոլոգ Ա. Օհանջանյանը:

x. 24.12.2020թ.-ի, նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, նախագահությամբ՝ Ա. Օհանջանյանի, հիմք ընդունելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև բժշկական կենտրոնի համապատասխան ծառայության մասնագիտական եզրակացությունները, որոշել է մերժել «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով:

xi. «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2020թ.-ին ներկայացրած բողոքի շրջանակներում Բողոքներ քննող անձն արձանագրել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 15-րդ կետի իմաստով Հանձնաժողովն ինքն է պարտավոր գնման

առարկային համապատասխան գնահատել մասնակիցների որակավորումը և առաջարկները: Իսկ հարկ եղած դեպքում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ): Նման պայմաններում, մինչև «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմում Ա. Օհանջանյանի ընդգրկվելը, Հանձնաժողովի կողմից իրականացված գործողություններն, Ընկերության ներկայացված հայտի գնահատման մասով, եղել են ոչ իրավաչափ: Այլ կերպ ասած՝ եթե առկա է ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 15-րդ կետի դրույթների խախտում, ապա դրանից բխող ցանկացած գործողություն, ինքնաբերաբար դառնում է անհիմն կամ խախտմամբ կատարված:

xii. Բողոքներ քննող անձը 29.01.2021թ.-ի կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշմամբ որոշել է «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի, այն է՝ պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթի գնահատող դադարեցնել թիվ 5 արձանագրության 1-ին և 2-րդ կետերով կայացված որոշումները, իսկ մնացած մասով բողոքը մերժել:

xiii. Հանձնաժողովի 08.02.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ ընացակարգի 3-րդ չափաբաժնի մասով իրականացվել է նոր գնահատում ինչի արդյունքում արձանագրվել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերն առկա են, սակայն ներկայացված թիվ 1.1 հավելվածով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին: Չեն համապատասխանում առաջարկի հետևյալ ցուցանիշները.

- օքսիգենատորի տարողունակության ծավալը 219մլ,
- շփվող մասի արտաքին շերտը՝ 1,75մ2,
- մաքսիմալ արյան հոսքը՝ 8,0 լիտր/րոպե,
- արտերիալ ֆիլտրի նվազագույն զտումը՝ 41 μm + 38 μm
- ջերմափոխանակիչի նյութը՝ պոլիուրետան (հիմք ընդունելով Մասնակցի կողմից Պատվիրատուին 21.12.2020թ. ներկայացրած գրությունը):

xiv. Նույն արձանագրության 3-րդ կետով Հանձնաժողովը որոշել է՝ օրենքով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, հաջորդ նիստ հրավիրել

09.02.2021թ, ժամը 16:20 և տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /09.02.2021թ., ժամը 16:20/ շտկել անհամապատասխանությունները:

xv. Հանձնաժողովի 09.02.2021թ.-ի նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն և թիվ 1.1 հավելվածը, սակայն տեխնիկական ցուցանիշների արձանագրված անհամապատասխանությունների մասով բնութագրի շտկում չի իրականացվել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Ընկերության հայտը 3-րդ չափաբաժնով գնահատել անբավարար և մերժել՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

xvi. Հանձնաժողովի 12.02.2021թ.-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 11.02.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարը՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» պարբերությամբ նախատեսված մարմնում գլխավոր քարտուղարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն է՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի, որտեղ պատվիրատուի ղեկավարը կարող է լինել աշխատակազմի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, որտեղ պատվիրատուի ղեկավարը կարող է լինել Հայաստանի

Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից լիազորված պաշտոնատար անձը:

Կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարը սահմանում է՝

ա. գնումները համակարգող,

բ. պատասխանատու ստորաբաժանում,

գ. գնահատող հանձնաժողով:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կազմում հանձնաժողովի անդամի կարգավիճակով չեն կարող ընդգրկվել գնումները համակարգողը, ինչպես նաև վերջինիս ներկայացուցիչը կամ աշխատակիցը: Գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

Կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով սույն կարգի 25-րդ կետով նախատեսված գրավոր հանձնարարականը կամ գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը, որը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում: Գնահատող հանձնաժողովի կազմը բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, որոնք սահմանվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության դեպքում նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն:

Նույն կետի 2-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ: Գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի

արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ պատվիրատուի ղեկավարի հրամանով սահմանվում է գնահատող հանձնաժողով, պատասխանատու ստորաբաժանում և գնումները համակարգող, ով իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները (Կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետ): Պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը՝ հանձնաժողովի կազմավորման մասին ակտը, որով սահմանվում է գնահատող հանձնաժողովի կազմը՝ բաղկացած առնվազն երեք անդամից, նախագահից ու քարտուղարից: Գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով, որն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը, իսկ հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ: Նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են յուրաքանչյուր նիստի արդյունքում ընդունված որոշումը (արձանագրությունը), որն էլ համարվում է գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մաս:

Ընդ որում, հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Իսկ այն դեպքերում, երբ պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 26.11.2020թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա ապրանքատեսակի՝ Ընթացակարգի Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի համապատասխանության հարցի պարզման համար Հանձնաժողովը որոշել է նիստը

կասեցնել և դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

Հանձնաժողովի 17.12.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ կենտրոնի համապատասխան ծառայության կողմից ստացվել է մասնագիտական եզրակացություն, ըստ որի «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնով ներկայացված Sorin Inspire 8F մեծահասակի օքսիգենատորի մի շարք ցուցանիշներ չեն համապատասխանել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և տեղեկացնել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի՝ նախագահությամբ Ն. Մելիքյանի, 21.12.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրել է իր կողմից ներկայացրած տեխնիկական առաջարկի պարզաբանում, միաժամանակ առաջարկելով նաև այլ մոդելի ապրանքներ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է կրկին դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

24.12.2020թ.-ի, նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, նախագահությամբ՝ Ա. Օհանջանյանի, հիմք ընդունելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև բժշկական կենտրոնի համապատասխան ծառայության մասնագիտական եզրակացությունները, որոշել է մերժել «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով:

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2020թ.-ին ներկայացրած բողոքի շրջանակներում Բողոքներ քննող անձն արձանագրել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 15-րդ կետի իմաստով Հանձնաժողովն ինքն է պարտավոր գնման առարկային համապատասխան գնահատել մասնակիցների որակավորումը և առաջարկները: Իսկ հարկ եղած դեպքում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ): Նման պայմաններում, մինչև «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմում Ա. Օհանջանյանի ընդգրկվելը, Հանձնաժողովի կողմից իրականացված գործողություններն, Ընկերության ներկայացված հայտի գնահատման մասով, եղել են ոչ

իրավաչափ: Այլ կերպ ասած՝ եթե առկա է ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 15-րդ կետի դրույթների խախտում, ապա դրանից բխող ցանկացած գործողություն, ինքնաբերաբար դառնում է անհիմն կամ խախտմամբ կատարված:

Բողոքներ քննող անձը 29.01.2021թ.-ի կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշմամբ որոշել է «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի, այն է՝ պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթի գնահատող դադարեցնել թիվ 5 արձանագրության 1-ին և 2-րդ կետերով կայացված որոշումները, իսկ մնացած մասով բողոքը մերժել:

Հանձնաժողովի 08.02.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Ընացակարգի 3-րդ չափաբաժնի մասով իրականացվել է նոր գնահատում, ինչի արդյունքում արձանագրվել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերն առկա են, սակայն ներկայացված թիվ 1.1 հավելվածով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին: Չեն համապատասխանում առաջարկի հետևյալ ցուցանիշները.

- օքսիգենատորի տարողունակության ծավալը 219մլ,
- շփվող մասի արտաքին շերտը՝ 1,75մ2,
- մաքսիմալ արյան հոսքը՝ 8,0 լիտր/րոպե,
- արտերիալ ֆիլտրի նվազագույն զտումը՝ 41 um + 38 um
- ջերմափոխանակիչի նյութը՝ պոլիուրետան (հիմք ընդունելով Մասնակցի կողմից Պատվիրատուին 21.12.2020թ. ներկայացրած գրությունը):

Նույն արձանագրության 3-րդ կետով Հանձնաժողովը որոշել է՝ օրենքով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, հաջորդ նիստ հրավիրել 09.02.2021թ, ժամը 16:20 և տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /09.02.2021թ., ժամը 16:20/ շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 09.02.2021թ.-ի նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն և թիվ 1.1 հավելվածը, սակայն տեխնիկական ցուցանիշների արձանագրված անհամապատասխանությունների մասով բնութագրի շտկում չի իրականացվել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Ընկերության հայտը 3-րդ չափաբաժնով գնահատել անբավարար և մերժել՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Հանձնաժողովի 12.02.2021թ.-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ն:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամները, մինչև պատասխանատու պերֆուզիոլոգ Ա. Օհանջանյանի հանձնաժողովի կազմում ընդգրկվելը, մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն չեն ունեցել, ինչի մասին վկայում է Հանձնաժողովի՝ 11.12.2020թ.-ի նիստի թիվ 2 ու 17.12.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությունները և Պատվիրատուի ղեկավարի կողմից 22.12.2020թ.-ին կազմված թիվ 1156/1 հրամանը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Կարգի 15-րդ կետի իմաստով, Հանձնաժողովն ինքն է պարտավոր գնման առարկային համապատասխան գնահատել մասնակիցների որակավորումը և առաջարկները: Իսկ հարկ եղած դեպքում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

Ամբողջացնելով վերոգրյալները, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ, նման պայմաններում, մինչև «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմում Ա. Օհանջանյանի ընդգրկվելը, Հանձնաժողովի կողմից իրականացված գործողություններն, Ընկերության ներկայացված հայտի գնահատման մասով, եղել են ոչ իրավաչափ: Այլ կերպ ասած՝ եթե առկա է Կարգի 15-րդ կետի դրույթների խախտում, ապա դրանից բխող ցանկացած գործողություն, ինքնաբերաբար դառնում է անհիմն կամ խախտմամբ կատարված:

Վերոգրյալ իրավական նորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով 29.01.2021թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշումը, դրանում արտացոլված ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ Բողոքներ քննող անձի դատողություններն ու դրանից բխող եզրահանգումները, պատճառաբանությունները, որոշել է Ընացակարգի 3-րդ չափաբաժնի մասով իրականացնել նոր գնահատում, որի արդյունքում արձանագրվել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտում հրավերով պահանջված և ներկայացված

թիվ 1.1 հավելվածով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին, օրենքով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով նիստը կասեցվել է՝ մասնակցին առաջարկվել է շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն և թիվ 1.1 հավելվածը, սակայն տեխնիկական ցուցանիշների արձանագրված անհամապատասխանությունների մասով բնութագրի շտկում չի իրականացվել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Ընկերության հայտը 3-րդ չափաբաժնով գնահատել անբավարար և մերժել՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ, իսկ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ն:

Այսինքն՝ Հանձնաժողովի՝ նախագահությամբ Ն. Մելիքյանի, կողմից կատարված գործողությունները, «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից Ընացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտի գնահատման մասով, 29.01.2021թ.-ի կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 որոշման հիման վրա, արդեն Ա. Օհանջանյանի նախագահությամբ, կատարվել են սկզբից, որպիսի պայմաններում Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ Կարգի 15-րդ կետի դրույթների խախտում առկա չէ:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պայմանագրի գնման առարկայի բնութագրերի, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջների մասով բողոք կարող է ներկայացվել մինչև հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետը, ուստի և Բողոքներ քննող անձի քննությանն ենթակա են միայն այն բողոքները, որոնք ներկայացվում են մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 26.11.2020թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 11.12.2020թ.-ին ժամը 12:00-ը ներառյալ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ինչպես նաև ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերի գնման առարկայի տեխնիկական բնութագիրն ու ներկայացված բողոքի փաստական և իրավական հիմքերը, թույլ է տալիս եզրակացնել, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, վերջինիս վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը՝ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների խախտման մասով, ներկայացվել է Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետների խախտմամբ, քանի որ բողոքով ներկայացված Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտման հանգամանքները վերաբերում են ընթացակարգի հրավերով և նույն հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին, որպիսի պարագայում Ընկերությունը բողոք պետք է ներկայացներ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Բողոքաբերն իր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման համար կարող էր բողոք ներկայացնել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին մինչև «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 26.11.2020թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետը, որպիսի պայմաններում «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ինչ վերաբերում է Հանձնաժողովի կողմից իրականացված հայտի գնահատմանը, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովը 08.02.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ հստակ նշել է հետևյալ անհամապատասխանությունները. օքսիգենատորի տարողունակության ծավալը 219մլ, շփվող մասի արտաքին շերտը՝ 1,75մ2, մաքսիմալ արյան հոսքը՝ 8,0 լիտր/րոպե, արտերիալ ֆիլտրի նվազագույն զտումը՝ 41 μm + 38 μm՝ համեմատական անցկացնելով Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջների և Ընկերության հայտով ներկայացված թիվ 1.1 հավելվածի միջև: Այդպիսով ապահովելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների կիրառումը, այն է՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով. բավարար են գնահատվում

հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ ընթացակարգը չկայացած հայտարարելու համար անհրաժեշտ է գնման ընթացակարգի ամբողջական խախտումներով իրականացնելու հանգամանքի առկայություն (օրինակ՝ գնման ընթացակարգի առանց իրավական հիմքի կազմակերպված լինելը, հանձնաժողովի նիստի իրավազոր չլինելը և այլն), որը սույն բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձը չարձանագրեց, ուստի բողոքով ներկայացված մյուս՝ Հանձնաժողովի 08.02.2021թ.-ի ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրության Ընկերության էլ. փոստին ժամը 15:18-ին ուղարկելու վերաբերյալ ներկայացված փաստը, ու դրա արդյունքում արված դատողությունները՝ Հանձնաժողովի կողմից թույլ տված խախտումների վերաբերյալ, բավարար չէ ընթացակարգը՝ 3-րդ չափաբաժնի մասով, չկայացած հայտարարելուն պարտավորեցնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 11.02.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/07 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**